

արուած է (Ոսկ. Թղթ. Ա, 67, 68 եւն), — նոյնպէս բաւական յաճախ կ'երեւին կոչ-
նոց մէջ: Արշակ կը բամբասուի իւր չա-
փազանց մոլութեամբ « ի զինարբուս եւ
յերգս վարձակաց » (Խոր. 204): Հայոց
կարճատեւ թագաւորի մը՝ Շապուհ պարսկի
ընթրեաց մէջ կը հանդիպինք նոյնպէս
« ջնարահար քաջամատն կնոջ » մը (նոյն,
250): Հարկ չկար որ ասոնք միշտ օտար-
ներ լինէին. Բակուրի ընթրեաց պահուն
նոյն ինքն իւր հարճը, որ վարժ էր նոյն
արուեստին, եւ գուցէ երբեմն գործադրած
իսկ զայն, « վարձակ » եղած՝ « երգէր ձե-
ռամբ » ի պատիւ իւր հարճակալին կոչ-
նականաց (նոյն, 141): Այս օրինակաց
մէջ անոնց յայտնի պաշտօնն է՝ ցոյց տալ
իրենց փափուկ մատանց աշխուժութիւնը
ջնարի աղեաց վրայ, ուսկից է իրենց
ջնարահար կամ ջնարաւոր¹ կոչումը: —
Շատ բնական էր՝ որ նոյն գործւոյն հետ
գուգէին իրենց ձայնին քաղցրութիւնն ալ՝
եթէ ունէին. եւ այն ժամանակ կը լինէին

ճարտարութիւն (Հիւրշ. 245), համեմատել մեր արուես-
տականք բառին հետ, որ կը նշանակէ երաժիշտը (Մանգ.
I, 27. Ոսկ. Թղթ. Ա, 68), երաժշտական (Քրոն. Ա,
365), և նուազարանք (Ա. Մակ. Թ, 39, 41) որ արուեստը
ալ կ'ըսուին (Փաւ. 232):

1. Ոսկ. Թղթ. Ա, 468. յն. չւթարօծօճ, կիթաուեր-
զակ: